



ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդի N 136 նիստում

Նախագահ  Ա. Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ**



ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

2019-2023

ԵՐԵՎԱՆ 2019

ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնը որդեգրել է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորման հստակ գործելակերպ, առանձնակի շեշտադրելով հետազոտական գործունեության հիմնական գերակա խնդիրները, ակնկալիքներն ու քայլերը՝ առաջիկայում լիարժեք հետազոտական ուսումնական հաստատության (հետազոտական համալսարան) կարգավիճակ ունենալու տեսլականը:

Կենտրոնի պրոֆեսորադասախոսական կազմում առկա են հիմնարար հետազոտություններ իրականացնող գիտության տարբեր ոլորտներում հայտնի մասնագետներ, որոնք իրականացնում են գիտության և տնտեսության համար կարևորագույն նշանակություն ունեցող տեսական և կիրառական բնույթի հետազոտություններ՝ տեղեկատվական տեխնոլոգիաների, բնագիտության, ինչպես նաև հասարակական և հումանիտար գիտությունների բնագավառներում:

Կենտրոնում շեշտադրվում է ուսուցման գիտականությունն ու հետազոտական բաղադրատարրի գերակայությունը, հիմնվելով այն կարևորագույն փաստի վրա, որ ԳԿՄԿ-ի ամբիոնները տեղակայված են ՀՀ ԳԱԱ հետազոտական ինստիտուտներում և գիտական կազմակերպություններում: Այս կարևորագույն հանգամանքը հնարավորություն է ընձեռում կենտրոնի մագիստրանտներին ու ասպիրանտներին իրենց ուսումնառության ընթացքում գտնվել մասնագիտական ակադեմիական միջավարում, ուսումնագիտական ծրագրերի ու հետազոտական աշխատանքների շրջանակներում աշխատել աշխարհահռչակ գիտնականների հետ, օգտվել ԳԱԱ կազմակերպություններում առկա նյութատեխնիկական անհրաժեշտ բազայից, օգտագործել այնտեղ առկա գործիքակազմը:

Հետազոտական ռազմավարության հիմնական խնդիրներն են՝

- Ընդլայնել և զարգացնել Կենտրոնի գիտաուսումնական և հետազոտական գործունեությունը, ԳԱԱ գիտական կազմակերպություններում ստեղծել նոր ամբիոններ:
- Տեսադաշտում ունենալով աշխարհի լավագույն հետազոտական համալսարանների գործունեությունը՝ ԳԿՄԿ-ն ամբողջությամբ համապատասխանեցնել հետազոտական ուսումնական հաստատության չափանիշներին:
- Ձևավորել մրցունակ գիտական և նորարարական ներուժ՝ նպաստելով գիտական արտադրանքի ապրանքայնացումը:
- Ընդլայնել միջազգային գիտահետազոտական համագործակցությունը:
- Ապահովել կրթություն-գիտություն-հետազոտություն կամրջականությունը:

- Շարունակել ԳԿՄԿ շրջանավարտների զբաղվածության խնդիրների լուծումը՝ նպաստելով նաև ԳԱԱ համակարգի կազմակերպությունների երիտասարդացման գործընթացին:
- Շարունակել կրթության որակի ապահովման և վերահսկողության մշտական աշխատանքները, ինչպես նաև հետադարձ կապի ապահովումը շահակիցների հետ:

Ակնկալիքները

- Կենտրոնում գիտահետազոտական աշխատանքների արդյունավետության բարձրացում,
- բարձր մակարդակի գիտական կադրերի պատրաստում և վերապատրաստում,
- մտավոր գործունեության արդյունքների փոխանցում և առաջանցիկ կրթափորձի տարածում,
- միջազգային չափանիշներին համապատասխան գիտության և հետազոտության զարգացում,
- մրցունակ հետազոտական և նորարական ներուժի ամբողջականացում և հետազոտական արտադրանքի ապրանքայնացում, կրթության և հետազոտության կամրջականության ապահովում,
- կիրառական հետազոտությունների արդյունավետության էական բարձրացում,
- ԳԿՄԿ ասպիրանտուրայի՝ իբրև բարձրագույն կրթության 3-րդ աստիճանի բարեփոխում՝ միջազգային կրթական չափորոշիչների և որակավորումների ազգային շրջանակի պահանջներին համահունչ:

1. Մագիստրանտների գիտաուսումնական և հետազոտական գործունեության խթանում

- Մագիստրանտների համար անհրաժեշտ պայմանների ստեղծում՝ հետազոտական- տեղեկատվական տարբեր շտեմարանների օգտագործման, գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման համար:
- Մագիստրոսական կրթական ծրագրերում հետազոտական բաղադրիչի շեշտադրման շարունակականություն:
- Մագիստրոսների հետազոտական աշխատանքի հմտությունների զարգացում:
- Ժամանակի պահանջներին համահունչ՝ մագիստրանտների գիտա- հետազոտական պրակտիկայի և հետազոտական գործունեության արդյունավետության բարձրացում:
- Մագիստրոսական կրթական աստիճանում առաջատար պրակտիկ մասնագետների և հետազոտող -գիտնականների ներգրավվածության համալրում, մագիստրոսների հետազոտական աշխատանքների կիրառական ուղղվածության ապահովում:
- Հետազոտության արդյունքների ապրանքայնացում՝ գործատուների հետ այդ ուղղությամբ փոխհարաբերությունների ընդլայնմամբ:
- Մագիստրանտների և դասախոսների ակադեմիական շարժունության խրախուսում, հետազոտական ուղղվածությամբ միջազգային ծրագրերին անդամակցություն, կրկնակի և համատեղ աստիճանաշնորհմամբ կրթական և հետազոտական ծրագրերի իրականացում:
- Մագիստրոսական թեզերի իրականացման գործընթացում հանրային կառավարման ոլորտի առանցքային նշանակություն ունեցող խնդիրների վերլուծությունների իրականացում և գիտականորեն դրանց լուծման ճանապարհների մատնանշում:
- Միջբուհական գիտական ծրագրերի, համատեղ հետազոտությունների իրականացման նպատակով ֆինանսավորման աղբյուրների որոնում, մագիստրանտների ներգրավմամբ դրամաշնորհային ծրագրերի ընձեռած հնարավորությունների օգտագործում:

2. Գիտական և հետազոտական ներուժի ամրակայում

- ԳԿՄԿ-ի ամբիոնների գիտական ներուժի, դասախոսների գիտական հետաքրքրությունների և արտաքին միջավայրի պահանջների հաշվառմամբ գերակա գիտական ուղղությունների հստակեցում և գույքագրում:
- ԳԿՄԿ-ի դասախոսների վարկանիշային գնահատման գործընթացում նրանց գիտական ակտիվության և գիտական արտադրանքի հաշվառմամբ՝ պրոֆեսորադասախոսական անձնակազմի գիտահետազոտական գործունեության բարոյական և նյութական խրախուսում:

- Ակադեմիայի գիտակրթական ոլորտում կայանալու և ՀՀ հանրային կառավարման ոլորտի համար առանցքային կադրային բազայի ապահովում:
- Իբրև դասավանդման որակի և մասնագիտական առաջընթացի կարևոր գործոն՝ դասախոսական կազմի առավելագույն ներգրավում հետազոտական և խորհրդատվական աշխատանքներում:
- Միջազգային գիտահետազոտական ծրագրերում ԳԿՄԿ-ի պրոֆեսորադասախոսական համակազմի, ասպիրանտների ու մագիստրանտների մասնակցության ակտիվացում ու ընդլայնում:
- ԳԿՄԿ-ի գիտահրատարակչական գործունեության, տպագրվող աշխատանքների բարձր որակ ապահովող արդյունավետ մեխանիզմների ներդրում:
- Երիտասարդ գիտնականների ներգրավման, նրանց սոցիալ-տնտեսական խրախուսման և գիտաշխատողի մասնագիտական առաջընթացի գրավչության բարձրացման նպատակով մեխանիզմների ներդրում:
- ԳԿՄԿ-ի ամբիոնների գիտական գործունեության որակի բարձրացում: Գիտական թեմաների արդիականացում՝ զարգացնելով միջբուհական ու միջամբիոնային համագործակցությունը:
- Հետազոտությունների գործընթացը խթանող, դասախոսների և սովորողների ստեղծագործական և հետազոտական նախաձեռնությունների զարգացնող միջավայրի ձևավորում՝ կիրառելով հետազոտական և դասախոսական աշխատանքների փոխհամաձայնեցված պլանավորման և ռեսուրսների ռացիոնալ բաշխման սկզբունքները:

3. Միջազգային գիտահետազոտական համագործակցություն

- ՀՀ ԳԱԱ գիտական կազմակերպությունների հետ սերտ համագործակցությամբ և ԳԿՄԿ Եվրոպական հետազոտական տարածքում ինտեգրման միտմամբ՝ ԳԿՄԿ-ի միջազգային գիտահետազոտական համագործակցության ընդլայնում:
- առավել սերտ համագործակցություն ՀՀ ԳԱԱ գիտական կազմակերպությունների հետ միջազգային գիտահետազոտական ծրագրային համագործակցության ակտիվացման համար՝ ապահովելու ԳԿՄԿ ինտեգրումը Եվրոպական հետազոտական տարածքում:
- Արտասահմանյան առաջատար համալսարանների և գիտական կենտրոնների հետ համատեղ նախագծերի նախաձեռնում երկկողմ պայմանագրերի կնքման և միջազգային ցանցերում ներգրավման միջոցով :
- Արտասահմանյան առաջատար համալսարաններում ու գիտական կենտրոններում ԳԿՄԿ-ի պրոֆեսորադասախոսական համակազմի և ասպիրանտների գիտական գործունեության , փորձի փոխանակման ու վերապատրաստումների գործընթացին աջակցում:

- Բարձր վարկանիշ ունեցող գիտական հանդեսներում հոդվածների հրատարակման և միջազգային ներկայացուցչական գիտաժողովներին մասնակցության խրախուսում:
- Պարբերաբար միջազգային գիտաժողովների, սեմինարների և կլոր սեղանների կազմակերպում:

4.ԳԿՄԿ-ի ասպիրանտուրայի կատարելագործում

- ԳԿՄԿ-ի ասպիրանտական ծրագրերի կատարելագործում և արդիականացում՝ նպատակաուղղելով դրանք նորագույն հետազոտական և կրթական տեխնոլոգիաներին տիրապետող և արդի աշխատանքի շուկային համապատասխան անհրաժեշտ մասնագիտական կարողություններով ու հմտություններով օժտված շրջանավարտների թողարկմանը:
- Եվրոպական բարձրագույն կրթական տարածքում ասպիրանտների ակադեմիական շարժունության խթանում: